կաղոյնս պատուիրեալ նմա և որդւոց նորին, զի մի երկուցեալ 'ի Բդեշխէն և կամ խաբեալ 'ի կաշառաց այլոց, այլազգ իմն գործեսցեն, գրել կամ կնքել վասն գործոց Հայոց, զի մի յետոյ Թագաւորն հատեալ զգլուխս անձէտ արասցէ զինքեանս։

Եւ ապա մեկնեցաւ ընդ Ոստիկանին 'ի Ցոպզէ, որոյ ծախուց ճեռնտու եղեն Հայք ըստ խնդրանաց նորին, գնալ անտի 'ի տեղի աքսորման իւրոյ ('ի 21 Ցունիսի)։ Եւ մինչդեռ Դատաւորն նստեալ էր 'ի Ցոպզէ՝ եհաս գիր 'ի Կուսակալէն, և ընդ նմա պատմէն հրովարտակին առ Թաղաքապետն՝ յորում փութացուցանէր տարադրել յԵրուսաղէմ զԴատաւորն, և եթէ պատճառանօք երկարեսցէ զժամանակն, կապանօք առաքեսցէ զնա 'ի տեղի իւր։ Եւ զկնի աւուրց ինչ իբրեւ տեսին Թաղաքապետն և զինակիր Կուսակալին թէ Դատաւորն նստեալ էր 'ի Ցոպզէ, յարմարեցին զայլ իմն բան, իբր 'ի դիմաց Կուսակալին, ըմբռնել զնա և կապանօք առաքել 'ի Դամասկոս, զի գիտացից ասէ թէ՝ յո՞ յուսացեալ է, բայց ոչ կարէին հանել զնա անտի բռնութեամբ. զի Ցոպզէ չէր ընդ իշխանութեամբ Նոցին, եւ եռուն բերել զորդի դպրապետին, որ գնացեալ էր ընդ նմա, և իբրեւ սպառնացան նմա, արար պատասխանի՝ թէ նա վաղ մեկնեցաւ 'ի քաղաքէ անտի, և ես մնացի ընդունել զնոր Դատաւորն և ուղեկից լինել նմա, որպէս սովորութիւն է։

Իսկ Լատին կղերք ոչ հանդարտեալ վերստին յուզեցին զխռովութիւն 'ի Բեթղեհէմ վասն ճանապարհին (յ8 Ցունիսի). զի պնդէին անցանել 'ի վերայ տիրացոյցն Հայոց՝ նաեւ Ֆէլլահ ժողովրդոց, մինչեւ անհանդիստ առնել զկրօնաւորս 'ի ժամերգութեան՝ հարկանել զնոսա, կործանել զդրքակալն և անցանել 'ի միջոյ նոցին։ Հայք յԵրուսաղէմ երիցս անգամ ազգ արարին Փոխանորդի Նոցին զսպել զտատՀակն, և չթողուլ սերմանել խռովութիւն 'ի մէջ երկուց ազգաց, այլ նոքա իբր յանդէտս, մերթ խոստանային գրել՝ զի մնասցէ այնպէս մինչեւ ցնոր տնօրէնութիւն, և մերթ չկամէին ելանել արտաքս յերկիւղէ ժանտախտին, սակայն միաբանք նոցին 'ի Բեթղեհէմ ոչ դադարէին 'ի թշնամանելոյ զՀայս, սուտ և յար-